

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՍԵՐՁԵՑ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր*

ԷՂՈՒԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ

Երկրի զարգացման ներկա փուլը նոր պահանջներ է ներկայացնում գիտությանն ու արտադրությանը: Հաշվի առնելով այն, որ ձեռնարկատիրության զարգացումը երկրի տնտեսական զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է, ներկայումս ոլորտի զարգացումը տեղափոխվում է որակապես նոր փուլ, երբ ձեռնարկատիրության զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականությունն ուղղված է առավելագույն բարենպաստ միջավայրի ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը: Երկրի կարևորագույն խնդիրներից է՝ հանրապետության ողջ տարածքում տնտեսության համաչափ և համամասնորեն զարգացման ապահովումը, որտեղ նույնպես կարևոր տեղ է հատկացվում գործարարության զարգացմանը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությամբ հանրապետությունում իրականացված միջոցառումների, վերջիններիս իրագործման որոշ մեխանիզմների կատարելագործման և նոր ծրագրերի մշակման ու իրականացման արդյունքում վերջին տարիներին արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների շարունակական աճ: 2008թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՆԱ-ի շուրջ 41%-ը ապահովում են փոքր և միջին ձեռնարկությունները: Ավելացել է նաև ՓՄՁ մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում՝ ներկայումս կազմելով 17%: Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում: Միայն 2007 թվականի ընթացքում ստեղծված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կազմել է ավելի քան 14 հազար, որի արդյունքում ստեղծվել է շուրջ 19,6 հազար նոր աշխատատեղեր, որից 52,8%-ը՝ ՀՀ մարզերում, իսկ 47,2%-ը՝ Երևանում:

ՓՄՁ-ի կողմից սահմանված մեթոդաբանությամբ հաշվարկված ՓՄՁ զարգացման ինդեքսը Հայաստանում 2007 թվականին կազմել է 355,7-ը, որը 2006 թվականին կազմել էր 237,2, իսկ 2002 թվականի համեմատությամբ ավելացել է ավելի քան 6 անգամ:

ՀՀ տնտեսությունում խոշոր կազմակերպությունների քանակը 2004թ. սկզբի 2,4%-ից նվազել է և 2005թ. սկզբին կազմել ընդամենը 2,2%, իսկ ագրարային ոլորտում նույն ժամանակահատվածում նույն ցուցանիշը ավելացել է 0,5 տոկոսային կետով, համարժեք աճ է եղել նաև հաջորդ տարի: Ըստ գնահատման՝ խոշոր ՓՄՁ-ների թվաքանակի դանդաղ աճի հիմնական

պատճառը՝ գյուղատնտեսական արտադրությամբ, ինչպես նաև ագրովերամշակմամբ զբաղվող տնտեսավարողների համար վարկային միջոցների ձեռքբերման ոչ բավարար մատչելիությունն է:

Հայաստանի Հանրապետության մարզերում այդ հիմնահարցի կարգավորման ամենաարդյունավետ միջոցը գյուղատնտեսական ներուժի օգտագործման մակարդակի բարձրացումն է ագրովերամշակման ոլորտի ՓՄՁ-ների զարգացման խրախուսման միջոցով:

Ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, ՓՄՁ գործունեության և զարգացման գործում դեռևս կան շատ լուրջ անելիքներ՝ եղած զգալի թերությունները աստիճանաբար վերացնելու համար, հատկապես ՀՀ մարզերի կտրվածքով: Ելնելով նրանից, որ ՓՄՁ պետական աջակցության իրագործվող ծրագրերը հիմնված են ՀՀ տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքների վրա, ներկայումս ՓՄՁ զարգացումը մտնում է որակական նոր փուլ և կոչված է ապահովել երկրի տնտեսական աճի կայունությունը՝ ստեղծելով բարենպաստ գործարար միջավայր ձեռնարկատիրությամբ զբաղվելու բնագավառում, ինչպես նաև տնտեսությանը հաղորդելով նորամուծական ուղղվածություն:

Փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեությունն ընդգրկում է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը, սկսած առևտրի ու սպասարկումների ոլորտից, վերջացրած բարձր տեխնոլոգիաներ օգտագործող ու գիտատար արտադրանք թողարկող արտադրություններով:

ՓՄՁ զարգացման պետական քաղաքականության շրջանակներում խիստ կարևոր է փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին տալ մշտապես փոփոխվող տնտեսական միջավայրում արդյունավետ գործելու ուղենիշեր: ՓՄՁ քաղաքականության մշակման ամենամեծ դժվարություններից մեկը կապված է պետական աջակցության նպատակայնության հետ՝ կապված ՓՄՁ սուբյեկտների մեծ քանակի և գործունեության ոլորտների բազմազանության հետ: Գործնականում գրեթե անհնար է մշակել և իրականացնել ՓՄՁ պետական աջակցության ծրագիր, որը կընդգրկի բոլոր ՓՄՁ-ները և գործունեության ոլորտները: Ուստի, ՓՄՁ քաղաքականության ռազմավարությունը պետք է հստակորեն սահմանի չափորոշիչներ, որոնց համապատասխան կընտրվեն ՓՄՁ-ների այն նպատակային խմբերը, որոնց պետք է ուղղված լինի պետական աջակցությունը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ անցումային տնտեսություն ունեցող երկրներում ձեռնարկատիրության և ՓՄՁ ոլորտի զարգացման լավագույն ուղին համալիր մոտեցումն է, որը ներառում է հիերարխիկ երեք մակարդակ.

- ռազմավարական մակարդակ (քաղաքականության մշակում),
- ինստիտուցիոնալ մակարդակ (աջակցող ենթակառուցվածքներ),
- ձեռնարկատիրական մակարդակ (ձեռնարկատերեր, գործարար միջավայր):

ՓՄՁ զարգացման վերը նշված բուրգային կառուցվածքում ռազմավարական մակարդակը համարվում է առաջնային և տեղակայված է բուրգի գագաթին: Ինստիտուցիոնալ մակարդակը տեղակայված է մեջտեղում և կապված է թե՛ վերին մակարդակի՝ ՓՄՁ քաղաքականություն մշակողների և թե՛ ձեռնարկատիրության սուբյեկտների հետ, որոնց համար էլ ստեղծվում են այդ աջակցող կառույցները, և որոնց ուղղված են այդ կառույցների առաջարկած ծառայությունները: Երրորդ մակարդակը ամբողջ կառույցի հիմքն է, իսկ ամբողջ կառուցվածքն արդյունավետ գործում է միայն ՓՄՁ ոլորտի զարգացման այդ երեք մակարդակների փոխադարձ զարգացման և օպերատիվ փոխհամագործակցության պայմաններում: Անցումային տնտեսությամբ երկրների մեծ մասում այս երեք մակարդակներից գոնե մեկը դեռևս թույլ է զարգացած, ինչն էլ պատճառ է ամբողջ համակարգի անարդյունավետության:

ՓՄՁ պետական քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը պետք է լինի ոչ միայն շահառու ՓՄՁ սուբյեկտների, այլ նաև հարկատուների պահանջների բավարարումը, որոնք մասամբ կրում են ՓՄՁ աջակցության պետական քաղաքականության շրջանակներում ծրագրերի իրականացման հետ կապված ծախսերը: Դրան հասնելու ուղիներից մեկը, օրինակ,

կարող է լինել ՓՄՁ աջակցության պետական քաղաքականության իրականացման արդյունքում ՓՄՁ սուբյեկտների կողմից մեծ թվով նոր աշխատատեղերի ստեղծումը, ինչպես նաև տարածաշրջանների տնտեսական ակտիվության բարձրացումը: Այսպիսով, որևէ ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության արդյունավետության գնահատման ամենակարևոր չափանիշներից մեկը տվյալ քաղաքականության շրջանակներում աջակցության և զարգացման ծրագրերի իրականացման արդյունքում նոր ստեղծված աշխատատեղերի քանակն է:

ՓՄՁ պետական քաղաքականության նպատակների իրականացման առավելագույն արդյունավետության համար ռազմավարությունը պահանջում է նաև կոնկրետ քայլերի հստակեցում: ՓՄՁ քաղաքականության դեպքում վերջինիս պլանները հուշում են քաղաքականության գործիքների ընտրության լավագույն ուղիները, որոնց կարևոր բաղկացուցիչ մասն են կազմում ՓՄՁ աջակցության ծրագրերը: ՓՄՁ քաղաքականության արդյունավետության բարձրացման համար խիստ կարևորվում են վերջիններիս համակցումը և համալիր տրամադրումը: ՓՄՁ աջակցության ծրագրերից յուրաքանչյուրն առանձին - առանձին կամ համալիր արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան ինստիտուցիոնալ ենթակառուցվածքներ՝ կիրառելով գործուն մեխանիզմներ: Հաշվի առնելով այն, որ շուկայական հարաբերությունների պայմաններում հարափոփոխ իրավիճակը, որն իր հետ բերում է անորոշությունների և պահանջների ավելի ու ավելի լայն շրջանակ, ՓՄՁ աջակցման ենթակառուցվածքներից մշտապես պահանջում է կատարելագործում և զարգացում, այլապես վերջիններս ուղղակի չեն կարող իրականացնել իրենց ամրագրված գործառնությունները:

Անհրաժեշտ է, ՓՄՁ պետական աջակցությունն ավելի ակտիվանա և ուղղված լինի ՓՄՁ աջակցության ոլորտային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, ՓՄՁ աջակցության ժամանակակից ենթակառուցվածքների՝ բիզնես ինկուբատորների, նորամուծական կենտրոնների ցանցերի ստեղծմանը, ՓՄՁ ֆինանսական աջակցության նոր գործիքների ներդրմանը, ՓՄՁ սուբյեկտների կողմից արտադրվող արտադրանքի որակի բարելավմանը, դրանց միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը և դրանց արտահանման հնարավորությունների ստեղծմանը:

Արտադրության ոլորտում, մասնավորապես արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ սուբյեկտների համար լուրջ խնդիր է ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությունը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարուց ավելի ժամկետով) ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությամբ:

Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել այն բանին, որ ներկայումս ՀՀ Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում առկա է սկսնակ ձեռնարկատերերի համար ձեռնարկատիրական գործունեության ծավալման հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակաս: Կարճ ժամանակամիջոցում պետք է հաղթահարել գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները:

Անհրաժեշտ է կարճ ժամանակում լուծել ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորդման հետ կապված խնդիրները, որոնք հիմնականում առնչվում են թողարկվող արտադրանքի որակի միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, ինչին էականորեն խոչընդոտում է ժամանակակից լաբորատորիաների բացակայությունը, որոնց փորձաքննության արդյունքները կարող են ընդունվել արտահանող երկրներում:

Կարևոր նպատակ պետք է համարել միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի մակարդակի էականորեն բարձրացումը հանրապետությունում: Անհրաժեշտ է լուծել տեղեկատվական հոսքերի անմատչելիության և դրանց ընկալման, մշակման ու փոխանակման

այն խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են ՓՄՁ սուբյեկտների կառավարման և շուկայավարման հիմնահարցերը:

Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել շուկայական և մասնավորապես արտաբժութային շխմերից ապահովագրման ու դրանք կառավարելու հետ կապված բարդությունների վերացման վրա, ինչը հատկապես խնդիրներ է ստեղծում արտադրության ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտների համար: Հատուկ ուսումնասիրության է արժանի ՓՄՁ սուբյեկտների համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ընձեռվող հնարավորությունների թերի և անբավարար օգտագործման հետևանքով շուկայում թույլ մրցակցային դիրքերի վիճակը, ինչը մասամբ պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների անմատչելիությամբ և դրանց կիրառման հնարավորությունների վերաբերյալ ոչ բավարար իմացությամբ:

Մեր կարծիքով մաս անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ, որպեսզի ՀՀ մարզերում գործող կազմակերպություններն իրենց արտադրանքով կարողանան մուտք գործել ինչպես այլ մարզեր, այնպես էլ երևանյան շուկա, ինչը կնպաստի վերջիններիս արտադրանքի մրցունակության բարձրացմանն ու ներմարզային համագործակցության զարգացմանը:

Հանրապետությունում ՓՄՁ զարգացման գործընթացների արդյունավետ կառավարման և ուղղորդման նպատակով անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել պետություն - մասնավոր հատված համագործակցության խորացման և աջակցությունից օգտվող ՓՄՁ սուբյեկտների նպատակային ընտրության միջոցով հետագայում դրանց ներուժը տնտեսական զարգացման գործընթացներին ուղղորդելու հնարավորությունների ձևավորման ուղղությամբ՝ ապահովելով տնտեսական աճի կառավարման լծակներ, որը կարող է զգալի նպաստել տնտեսական աճի կայունությանը:

Առաջարկվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը և ՀՀ մարզպետարաններին նկատի ունենալ հետևյալը ՓՄՁ-ի վերաբերյալ, երբ ներկայացվում է ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների, ապա վիճակագրական աղյուսակներ կազմելիս դրանցում ներկայացված ցուցանիշները ստացվում են՝ հիմք ընդունելով տնտեսության յուրաքանչյուր ճյուղում արտադրանքի (աշխատանքի, ծառայությունների) թողարկման բաշխվածությունն ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների, արտարկման մեթոդի կիրառմամբ: Արդյունքում հնարավոր է դառնում գնահատել ՀՆԱ-ում սուբյեկտների տեսակարար կշիռը: Սակայն գնահատականը հաշվի չի առնում գյուղատնտեսության և զուտ հարկերի բաշխվածքն ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների՝ պայմանավորված նշված ոլորտում ճշգրիտ գնահատականների բացակայությամբ: Ընդ որում, եթե հարկերի դեպքում կարելի է ընդունել այն մոտեցումը, որ դրանք բաշխվում են ավելացված արժեքի բաշխմանը համապատասխան (որի դեպքում ստացված տոկոսները փաստորեն չեն փոփոխվում), ապա գյուղատնտեսության դեպքում գնահատման որևէ մոտավոր չափանիշ չկա, չնայած ակնհայտ է, որ այն առավելապես ուղղված պետք է լինի ՓՄՁ սուբյեկտներին:

Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական քաղաքականությունը պետք է իրականացվի՝ ելնելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնարար դրույթներից բխող մի քանի սկզբունքներից՝

- ա) ՓՄՁ զարգացման պետական քաղաքականությունից բխող ծրագրերի ու միջոցառումների ուղղվածությունը տնտեսության արտադրական հատվածի վերակառուցմանը և հզորացմանը,
- բ) հիմնական ջանքերի ուղղումը՝ գլխավորապես նորամուծությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը,
- գ) հանրապետության տարածաշրջանների միջև առկա տնտեսական անհամամասնությունների հաղթահարումը և թույլ զարգացած մարզատարածքների սոցիալ-տնտեսական

զարգացման խթանումը՝ որպես ՓՄՁ պետական քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների կարևորագույն սկզբունք,

դ) գյուղատնտեսական ապրանքների վերամշակման և տեղական արտադրության պարենով բնակչության ապահովումը՝ որպես հանրապետության տնտեսության զարգացման և տնտեսական անվտանգության ապահովման կարևորագույն ուղղություն և ՓՄՁ զարգացման ուղղվածությունն այդ նպատակի իրականացմանը,

ե) առանձնակի ուշադրություն և օժանդակություն ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ՓՄՁ-ներին, որոնք չնայած ոչ համաչափ, բայց արդեն կազմավորվում և գործում են:

Փոքր և միջին ձեռնարկությունները, ինչպես նաև անհատ ձեռներեցությունը, լինելով ժամանակակից շուկայական տնտեսության կազմակերպական հիմքերից մեկը, հսկայական ներուժ են պարունակում նոր աշխատատեղերի ստեղծման և ինքնագրավածության ապահովման առումով: Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը յուրահատուկ և արդյունավետ նախադրյալ է բնակչության կենսամակարդակի շարունակական բարձրացման, զբաղվածության ապահովման և, վերջին հաշվով, տնտեսական համակարգի բնականոն գործունեության համար: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ եվրոպական զարգացած երկրներում նոր աշխատատեղերի գրեթե 65 տոկոսն ապահովվում է փոքր և միջին ձեռնարկությունների միջոցով, ընդ որում նրանց է բաժին ընկնում համախառն ներքին արդյունքի 40–60 տոկոսը: Այս ոլորտի զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմել անցումային տնտեսությամբ պայմանավորված տնտեսական ու սոցիալական դժվարությունները՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծելով տնտեսության զարգացման համար:

Մեր ուսումնասիրությունները փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեության միջազգային փորձի վերաբերյալ ցույց են տալիս և հաստատում են, որ փոքր բիզնեսն ամենաժողովրդավարական, հասարակական ինստիտուտն է, որտեղ յուրաքանչյուր ձեռներեցի հնարավորություն է տրվում դառնալ ոչ միայն տնտեսական զարգացման օբյեկտ, այլև սուբյեկտ: Փոքր բիզնեսի ոլորտն ապահովում է ազգային տնտեսությունների ՀՆԱ-ի նշանակալի մասը, հնարավորություն է ընձեռում կարճ ժամանակահատվածում ապահովել տնտեսական աճ՝ միևնույն ժամանակ շտկելով անցումային փուլի անցանկալի դրսևորումները, ստեղծում է նոր աշխատատեղեր, նպաստում «միջին խավի» կայացմանը և ամրապնդմանը:

ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Մ.Զոքանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՈՎԱՅԻՈՆ ԲԱՆԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Եթե ներկայումս Հայաստանի տնտեսագետների շրջանում գոյություն ունի բավականին տարածված կարծիք այն մասին, որ անցումային փուլը որոշակիորեն ավարտում է, ապա մեր համոզմամբ այդ կարծիքը չի կարող վերաբերել գիտության և ինովացիաների կառավարման ոլորտին: Երկրում գիտատար ակտիվների ֆինանսավորումը և «թողարկումը» դեռ մինչև այժմ գերազանցապես պետական «մենաշնորհ» են¹: Սա խիստ հակասական իրավիճակ է և խոսում է այն մասին, որ գիտահետազոտական ինստիտուտը գրեթե չի ինտեգրվել շուկայական տնտեսությանը՝ հաշվի առնելով դրա զարգացման արդի օրինաչափություններն ու միտումները:

¹ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» ՀՀ ԱՎՃ, 1998-2008 թթ: